

W B USU

L P C S H P

РЕДАКЦИЯ, СОФІСТ, РЕДАКЦІЯ та САБІСУС

Տարեկան գին կտեմբիկ Դպրություն 100

Այս Լրագիրը տանեն շաբաթ՝ օրերց կը հրաւարակուի.

Պօշխեն գուրքա գացոծ Լրագիրներուն Փօսթային ծախը տոնոցին ջրաց է :

ՔԵՐԵՔԱԿԱՆ

ԱՅՐՔԻ ԼՈՒԾԵՐ

ՊՈԼԻՍ ՅՈՒՆԻՎԵՐՍ

Երգարութեան վճռոց գերազանց
առենին նախագահ բարձրապատի Շի-
ֆաթ փաշոյին աղան աղնուաշուք Շէ-
ուֆ պէզը, որ ժամանակէ մը ՚ի վեր-
կշրուտայի քանի մը կողմէրը պարտե-
լու գացուծ էր. ամսոյս 10ին երեքշաբ-
թի օրը Քաղաքի շուենաւով մայրաքա-
ղաքս հասաւ:

— «Կոյածները Պ. Եւստուֆ հաճ-
ճարին մեռնելը պատմեցինք : Վրիկայ
օմանեան մեծազօր տէրութեան թէ
կառանդինուազօւց նեղուցը և թէ ու-
րիշ ովելքերեայ քաղաքները երթեւե-
կութիւն ընող 17 կտոր շոգենաւու-
հոգաբարձութիւն ուներ . որոց 12 հա-
մը կայսերական նաւարանին . և 5 համը
մեծազօր տէրութեան բարձրաստի-
ճան նախարարներուն եին : Պ. Ես-
տուֆ համձարին մեռնելովը սց երկու-
կարգ շոգենաւներուն տեսչութիւնը
իրարմէ բամենեցաւ . և Պ. Հայա-
հինգ շոգենաւներու հոգաբարձու ան-
ուանեցաւ : Եւ ամսոց 8 ին ելած կայ-
սերական հրամանագրով մը կայսերա-
կան նաւարանին 12 նաւերուն գերա-
գոյն տեսուց անուանեցաւ լինան օպասիի
նախագահ մեծարքոյ Լոմին պէտը . և
կարգագիր և ասորակարգեալ մեսուց
անուանեցաւ յարգապատճեւ : Կասոն ա-
զայն Դընկըրեան : Վ. յս յարգապատճեւ
հայազգի անձը , որ ասկէց առաջ բարձ-
րագոյն գրան թարգմանութեան դի-
ւանին խորհրդական անդամներէն եր-
այս առիթով լինան օպասիի դիւանին խոր-
հրդական անդամ անուանեցաւ :

— Քատի գեղ եղած գողութիւնն
ները . և գողերուն բլունուիլը անցած
ները պատմեցինք : Ասնք դատելու
համար սատիկանութեան գերադայն
տեսչութեամբք քննիչ ժողովք մը գըր-
վեցաւ . որուն մէջն են Պ. Տէ Չիվի-
նիս և Պ. Վարդալիդի Խարովացինե-
րը :

— Ենիկ սելանիկցի մէկ մը ճամբոր դութեան համար անցագիր առնելու եթալովիր վկայականը ցուցուց ու բուն մէջ ուր ծնած ըլլալը և մեծաղօր տէրութեան հպատակ ըլլալը գրուած

ըսելէն ետքը պատմեց թէ ինչ ձամբայ
բռներ է երկու վկասական մէկէն առ-
նելու . որ մէկը շիրամի նէ միւսը բա-
նեցընէ : Չեմք գիտեր թէ այս մարդք
ձամբեցին . կամ թէ աղէկ մը քննելու
համար առնեն :

լու գրա ։ ։ ալլա ։ ։ առաջ ըստ լու բառ
լրացնին սխալ է, և անոր օր ինակը չկ
դըսնեաւ երան պատճառը այս է որ, որ
քան օրինակներ օր Վաւանայէն եւկած
են նէ, որ հարիւրի չափ կային, իմա-
կընկալութեան գէմ ամենն ալ հասա-
ծին պէս ծախուեր են։ Վրեր եմ որ
ուրիշ օրինակներ ալ խրկեն. և թէ որ
կ'ուզէք նէ՝ երբ որ գան նէ ձեզի կը
ծանուցանեմ։ Խնդիրը օրէ օր հասա-
րակաց կարծեաց առաջը աւելի կարե-
ւորութիւն մը կ'առնէ. ինչպէս որ
օսմանեան տէրութեան և ֆրանսորդի
կառավարութեան առաջն ալ։ . . . և
որովհետեւ յիշեալ կրկին տէրութիւն-
ները ասոր վրայ կըխօսին, ուրիշե-
րուն խօսիլը պարապ աշխատութիւն
մըն է ։ ։ Ասոր համար մենք ալ մինչեւ
հիմայ այս երեւելի խնդրոյս վրայ չեմք
խօսած, և ասկէց ետքն ալ խօսելու
գիտաւորութիւն չունիմք, մինչեւ որ
յունաց և ֆրանսորդներուն յետկար-
ներուն (սէնէտներուն) և մէջ բերած
պատճառներուն նայելով մեծազօր տէ-
րութեան բարձրագոյն դուռը, որուն
իշխանութեանը տակն են սրբութեան
ու հասակենիս, և ո մծեռու տաւ։

CESE-FFB - Labelfs

ԳԱՐԴԻԱ : ԱԵԿ հանդիսաւոր օր մը
Տիբօն քաղաքը մէկ մարդ մը բազմու-
թեան մէջ իւցի՛ հասարակապութիւն պօ-
ռաց : Այսն հետայն զինուոր մը եկաւ
մարդը բռնեց, ստիպեց որ հետը գայ

Իր շահին համար չուր մց հրատարակեց ուղղոց դիմով վճարել տողին 40 փարոյ

Ապրանիկ գրոց ծանուցումը ձրի է :

Դաւ. բաէն եկած Համակներուն և Փութացին ծախքը Երկուը դիտի շնորհ

մինչեւ ոստիկանութեան կայարանը :
Այս միջոցին ուրիշ մէկը մէջ մօտաւ ,
և բռնուածը ազատել կ'ուղէր . ըստ-
լով թէ՝ Երկրիս Հասարակապետութիւնը
հիմա Հասարակապետութիւն է . և
այս մարդը ուրիշ մէկ քանի մը ըստծ
ըլլալով սահմանագրութե՞ն դէմ յան-
ցանք մը ըրած չէ . ոստիկանութեան
կայարանը Երթալու չի պարտաւորիր :
Օ ինուորը այս միջնորդին . ըստաւ .
գուն անգամ մը նայէ որ գրապանակդ .
(ուշքդէր քէսէսին) վկանդ է մի : Վար-
դը կը նայի որ գրապանակը յիրաւի
անցայտ եղէր է : Օ ինուորը կ'ըսէ .
այս մարդը գրապանակդ առաւ , և
բանը շփոթի բերելու և ըրածը ան-
ձանօթ մնալու համար այս ձայնը հա-
նեց . եկուր ոստիկանութեան կայա-
րանը , և բանին տացգը հան կը հաս-
կրնաս : Վարդը կը հարկադրուի զին-
ու որին և հասարակապետականին հետ
Երթալու : հան գրապանակը հասարա-
կապետականին հանել կուտան և տիւ-
րոջը կուտան : Կըսուի որ՝ այն ատե-
նէն ՚ի վեր մէկը իցյէ հասարակադքո-
նիւն ըսելուն պէս մէկ մը ձեռքը գըր-
պանը (ձէպը) . կը տանի , ըլլայ որ հա-
սարակապետութիւնը առաջնոյն պէս
իր գրապանին վրայ լինասակար աղդե-
յութիւն մը ըրած՝ և գրապանը թե-
թեւզուցած ըլլայ :

ԱՆԳՐԻԱՅ: Բարեյտուայ հրուանգաւանին ներսէրը բնակաղքաֆրերուն հետ ինկիլիզի տէրութեան կոփւլ տակաւ և ին կը շարունակէ: Խնկիլթէռ ապյէն օգնական զօրք խրկուեցան: որ հոն հասեր են: և Ալբէնէմ' Դառւն գացեր են, Պ. Խօմէրսէդ զօրապետին հետ խօսք մէկ ընելու համար թէ պատերազմելու ինչ ճամբաց բռնեն: Քանի մը անգում քաֆրերուն հետ զար նուեցան: և քաֆրերը տմեն անգամին վես կրեցին: Ոխայն Ալբ Օժայթ գաւառագետին երթալու գիրերը կարողացան ձեռք ձգելու: Դաւառապետը ամսեն կողմ զօրք կը խրկէ: որ թը ընամբները կարող ըլլամն աչք բանալու և միաբանելու: Խօմէրսէդ զօրապետը շտո կարօսութիւն ունի զօրաց: ուստի հայունաբար (հիմրանտէր) գուները ա-

— Եսկեց ժամանակ մը առաջ, 1850
սեպտեմբերի մէջ, Հռոմայ հայրա-
պետը Խնկիլթէռուայի մէջքանի մը ե-
կեղեցական վիճակներ որոշելով անսոնց
եպիսկոպոսներ գրաւ, և Խիքոլաս Ու-
այզմէն եպիսկոպոսն ալ կարդինալ ը-
նելով Ուէսոգմինստրը արքեպիսկոպոս
անուանեց. որ Ո օնտուայի մէկ թա-
ղին պէս բան մըն է: Եւ որովհետեւ
բոլոր Խնկիլթէռուայի մէջ արքեպիսկո-
պոսները ինկիլիզե թագուհին կ'ան-
ուանէր, ուսափ հռոմեականներուն
վրայ Հռոմայու քահանայապետին վի-

Ճակատոր եպիսկոպոսներ անուանելը
ինկիլլզի կառավարութե անանկ եկալ
որ՝ դժուէն իշխանաւոր մը թագուհեցին
յասկացեալ իշխանութեանը ձեռք կը
զարնէ : Աւստի պապին այս կարգադ-
րութիւնը ինկիլլթէռուայի մէջ իմաց-
ուած ժամանակիէն սկըսելով՝ ինկիլ-
թէռուայի ամեն կազմէն թագաւորին
աղերսագիրներ կը խրկուէին , որպէս
զի դուրսէն եկած ասանկ կարգադ-
րութիւնը մը որ ինկիլլթէռուայի թա-
գաւորական իբաւանցը կը դպչէ , խա-
փանուի : Այս բանիս համար պաշտօ-
նէից նախագահը լուստ Շօհն Ուու-
սէլ մէկ օրէ նք մը պատրաստեց առա-
ջարկելու , որպէս զի ասկէց ետքը պա-
պին այս կերպ հրամանները և կար-
գադրութիւնները ինկիլլթէռուայի մէջ
չերանի : Ակային բոլոր ինկիլլթէները
համաձայն չէին այն կարծիքին վկայ ,
թէ պատվին կարգադրութիւնը ինկի-
լթզի թագաւորական իբաւանցը կը-
գոչէ : Ինկիլլթէռուայի և Ուղանտայի
հասմէականներէն զատ լքոսի օտարա-
հաւատներն (Կոն-քօնֆորմիտներն)
ալ պապին կարգադրութեան մէջ թա-
գաւորութեան օրինաց դէմ բան մը
չէին տեսներ , ատենակալներուն մէ-
ջէն ալ ոմանիք լուստ Շօհն Ուուսէլին
հրամատակած օրինաց առաջարկու-
թիւնը իբրեւ հուսմէականներուն դէմ
հալածում մը կարծելով չէին հաւներ :
Բայց առենակալաց մեծադրոյն մասին
հաւանութիւնը լուստ Ուուսէլին հետ
ըլլալով , օրինաց առաջարկութիւնը
ըստ սովորութեան երեք անգամ խոր-
հրագարանին մէջ կարգացուելէն և
սրբագրուելէն ետքը լնդունուեցաւ
(Կուլս 8 ին . յունիս 26) : Ուստ
ուիլին հրամատակած և ատենակալնե-
րուն ընդունած առաջարկութիւնը
հետեւեալ յօդուածներուն մէջ կը
պարունակէի :

Ա. Համայնքն եկած ամեն հըրու
վարտակները կոնդակներն ու առարե-
լական նամակները, և ասսնցմով արք-
ուած ամեն իրաւաբանութիւններն ,
իշխանութիւնն , աւագութիւնն ու
պատուանաւնը օրէնքէ գուրս և ան-
վաւեր են, պէտք են անանկ ըլլալ ,
և այնպէս պէտք են համարուիլ :

տատուելէն ետեւ Հռոմայու եպիս-
կոպունին կամ հռոմէական աթունին
նամակները կամ կոնդակը կամ հրավար-
տակը, որոնցմով լնեգլայի մէջ արքե-
պիսկոպոս, եպիսկոպոս կամ տանտե-
պետ մը կը հաստատէ, կ'ընդունի, կը
հրատարակէ կամ կը գործածէ, կամ
օրէնքէն իշխանութիւն տրաւած ան-
ձերէն զատ մէ կը տէրութեան գո-
ւառներուն մէկուն արքեպիսկոպոս-
թեան կամ եպիսկոպոսութեան պատ-
ուանուն տայ կամ ընդունի կամ գոր-
ծածէ, ամեն մէկ այսպիսի յանցանքի
համար այս օրէնքը հաստատուելէն

եսպը 100 լիրա սդէուլին (11,000 դուռուուշ) տուգանքը պիտի վճարէ ինչ և իցէ կերպով, կամ թագուհւոյն բարձրագոյն աստեաններուն մէկուն մէջ, ինչպիսի սննդէ ամեաստանուած ըլլայնէ ըլլայ : Ենգզիայի ու Իռլանդայի մէջ թագուհւոյն ընդհանուր փաստաւ բանին, իսկ Ալիվօսիայի մէջ իւտգուհւոյն փաստաբաններուն հաւանութեամբը գէպիքն ինչպէս որ կը բերէ նէ :

Գ. Այս օրէնքս Վելլապահի այն բռ
զոքական եպիսկոպոսներուն վրաց չէ
տարածուի . որոնք եպիսկոպոսական
պաշտօն կը վարեն :

Դ. Այս օրէնքը այնպէս հաստատվել է ու մագուշացն իր իշխանութեան ու թերորդ տարին Խոլանսայի մէջ բարերարական պարզեւներն ու կոտակաւ ձգուած ինչքերն աղջկէ գործածելու համար հանած օրէնքը չի ջնջէ կամ չի խախտէ :

Երբնտէլի և Արքքէյի կոմոը՝ որ հը-
ռամեշտիան է, և ատենակալներուն
մէկն է պատգամաւորաց կարգէն, ա-
տենակալութենէ հրաժարուեցաւ զին-
քը հսն խրկելու համար ընտրողներուն
նամակ մը խրկելով, որուն մէջ ինչ
պատճառով հրաժարիլը չիմացուներ .
միայն այն կ'ըսէ որ, խրծհրդականու-
թեան ատեանը անսոնց կողմէն տասն
և չորս տարի շարունակ պատգամա-
ւորութիւն ընելէն եաքը կ'սափակուի
հրաժարելու : Անոնք ալ հրաժարակա-
նը ընդունեցին :

¶. № 5, φ. Ριονίκης, σημειώσεις
μή | αγαπήθηκε πρωταρχίαν και μέτικην αριστοτελείαν
ματιαρά ιαρκουαδή ή, αյα μεταρχή
ματιαριατρήτην ή ρωμαϊκού γατού. • ευαγγ
| αγαπήθησεν και μητροπολίτην ή την μητρό^η
ηρ | γραντοτελή ή Ερροτζή ή και μηρύρην
ρητήν. αθηναϊκή μεταρχή γατού ή ο Ριονίκης
ή ρωμαϊκού γατού μητροπολίτην, ευαγγ
ξή φιλοποιηθείται ήτη ή η γένεση την
φημίρει μητροπολίτην γατού μητροπολίτην
επισήμη.

§. Ուսցմէն կարդինալ արքեպիսո-
կոպոսը Խնկիլթէռուան Ֆուանսայէն
զատող Անհ նեղուցին կղզիներուն
մէկուն մէջն ալ եկեղեցի մը շննել
աալու մաքով՝ յուլիս 12 ին Ֆուանսա
անցաւ և Քահէն քաղաքը գնաց : Եւ
որովհէտեւ այն օրեւը Խնկիլթէռուա
պապէն նոր անուշանուած է պիսկուալու-
ները պիտի ձեռնադրէր, նոյն ամսոյն
16 ին աւտուանց շգենաւով նորէն
Խնկիլթէռուա դարձաւ :

— Վրուեսատից հանդիսաբանին վրացը նախընթաց թերթերուն մէջ խոսեցանք ինչ որ օտար երկիրներէ հանգաղ մարդիկ դիմուր և դրեր էին . և ասոնց դիմուրութիւնը բնապէս հանգիստարանին նիւթական հանգամանացը վրայ կրնար ըլլալ . բիւրեղեաց պալատին տրամադրութեանը վրայ . ներս մոնելու մարդոց առւած ստակէն գումարուած եկամուտին վրայ . աշխարհաքիս այլ և այլ կողմերէն հանքերուած բնական և արուեստական բերքերուն վրայ . . . : Կը մնայ ասանկ երեւելի հանդէսի մը տնտեսական և բարյական ազգեցութիւնը տեսնել . և այս այնքան արւաւել պէտք է , որ ասանկ հանդէս մը մինչեւ հիմա եղած չունէր . Ո օնտուայինը առաջինը եղաւ . կարելի է որ ուրիշ տէրութեանց երկիրներ ալ ասկէց եաքը ըլլայ . ինչպէս որ նոր բացուելու աաենը կը զբուցվէր որ 1852 թուին ալ ասանկ հանգէս մը Վմբրիկայի միացեալ նահանգացքաբներուն մէկուն մէջ պիտի բրայ . և մենքը ալ բագրայ մէջ ժամա-

Եւսկին ծանուցի՞մք։
Այս ազգեցցութեանց վրայ ինկի-
լիզի երկու երեւելի և յարդի օրադիր-
ներուն խօսքերը թարգմանեմք այս
տեղ։

Ուսանողներ հերթը օբարդելը կ'ըստ :

ատենը համարձակ ներս մտնելու կա-
րող ըլլալու համար տոմսակ մը առեր-
է, և ոսքերն ալքալելու աղէկ կը դի-
մանան, ամըրովան եղանակը անցընե-
լու պէտք եղածի չափ սկատրաստու-
թիւն ուսած է „ :

ԱԼՄԴՐԻԸ : Կայսերական կառավագարակութիւնը 1848 ին բացուած Խտալիա-
յի ազգատութեան կոխիւին վրայ պատ-
շաճ դատեց որ | օմաքարտիայի երկիր-
ները և Վէնէտիկ ամրացընէ, որ մէկ
մըն ալ ասանկ բան մը պատահի նէ
պարապ չի գտնուաին : Այս գիտաւո-
րութեամբս զինուորական կանոններու-
համեմատ ամրացուցին | էնէտիկ, Վէ-
րօնա, Տէպիէրա, Վէնէտիանօ, Պրէ-
շիա և Ողլան : Կառատա ըստուած լճին
եզերքը Ոիխլա տեղը զինուորական նա-
ւահանգիստ ըսին պաշտպանութիւնը
դիւրաւ ըլլալու կերպով, և ասսն և
երկու հատ նոր և թնդանոգաձիգ լո-
րուբա և երկու շոգենաւ և ասոնց այ

պէտք ըլլալու չափ մարդիկ տնօրինուեցան, Նրբ որ այն կողմէն պատերազմ մը պատահելու ըլլաց նէ՝ այս պատիկ նաւախումբը շտումնէ օգուտ կ'ընէ։
Ուստէցքի մարէ չալլը մօտերս իդաւ լիս ճանապարհորդութիւն մը ըրտունէ միտքը այն էր որ անձամբ տեսնէ թէ իրեն տուած հրահանգները լսման կատարուած էն մի։ Վէկ գիտաւորութիւնն ալ իրեն զօրքերսվը Այս Ուստինո ըսլած պղտիկ հասարակագետւութեան երկիրը չորս գիէն պաշտելէր, որ Հասմայութիւնանութեն երկիրներուն մէջ ինկած ինքնագլւուխ իշխանութիւն մըն է։ Եյս պղտիկ երկիրը՝ անցած տարիներուն պատերազմ ներէն փախչող աղասասէրներուն գլրեթէ իրար գանելու կէտը եղած էր, և զէնքերու և պատերազմական պիտոյքներու համբարանոց մըն էր։ Ուստէցքի մարէշալին թիկնապահ (եսովիրի հարպ) զօրապեաը ասոնց ծանուցական գիր մը խրկեց, որ այս հասարակագետաւիլ պարտաւորեցաւ բազմաթիւ ռամկապետական անկէց գտւրս հանել, որ հօն ապահով տեղ մը չի գանելով Տիկմոնդէ անցան Այսուենիայի երկիրը։

Ֆռանսացները խաղլիսյի մէջ հաստակապետականները ուսք ելլելու եղած ատենին պատրաստ գտնուելու համար Չիլիութ Ա էքքիս և Հռոմայ յու քաղաքին կից սո-բբ հրեշտակ (սանդակնելո) ըսված բերդը կ'ամրացընեն : Աւոգրիսայի կողմէն ալ թօսքանայի երկիրը հիմա տասն հազար զօրք կը գլանուին : Ուատէցքի մարեշալը կարգադրած է որ, Հռոմայու երկիրը մէկ պլղտիկ խլատում մը անգամ իմացուելուն պէս այս զօրքերէն եօթը հազար հոգի անմիջապէս թօսմանիս անցնին, որ Նը ուսմայու իշխանութեան տակը թօսքանայի սահմանն է, և մնացած երեք հազար զօրքն ալ պատերազմական կանոնով տիրեն և ղահեն թօսքանայի Թիուէնցէ մայրաքաղաքը և ծովեղերեայ | իվունո քաղաքը : Տան և ութն հազար հոգի ալ զգուշութեան համար Վանդուայի կողմը կեցուցած է, ասոնք ալ թօսքանա պիտի մտնեն : Անքօնայի աւսուրիսացի պահապան զօրքն ալ մինչեւ եօթն հազար հոգի եղան : Հնդկապետականներուն ըրած գաղտնի պատրաստութիւնները իմացուելուն որ աչքերնին Վռանսայի վրայ ձըգած էն, և առիթ մը գտածներնուն պէս նորեն դաքախի ելլեն և աշխարհքս տակն ու վրայ պիտի ընեն, այս պատրաստութիւնս ընելու առիթ տրուած է Աւոգրիսայի կառավարու-

թեանը : — Կառավարութիւնը 1845 ին և
47 ին , և 48 ին ալ մէկ մասին մէջ ե-
ղած մարդաթիւը այս տարի 1851 ին

Հրատարակեց . ինչպէս որ կը գրէ Աւագ կը զարդի օրագիրը . և է այս : Աւագ բիսյի կայսերական կառավարութեանը տակը եղած բոլոր երկիրներուն մէկէն տարածութիւնն է 12,123,096 քառակուսի մզոն աշխարհագրական . որով Փուանային 2000 քառակուսի մէկրոմէծ կ'ըլլաց . և Բրուսիային երկուք ու կէս անգամ աւելի . և Խնկիլթէռային ու Խուլանային , երկուքը մէկէն առնելով , կրկինը : 4,510 $\frac{1}{2}$ քառակուսի աշխարհագրական մզոնը՝ գերմանական գաշնակցութեան մասն է . ըսել է՝ ամբողջին 7/2 երրորդ մասը՝ կայսերական երկիրին ժողովուրգը՝ 1846 թուին եղած մարդաթիւին նայելով՝ 37,443,033 հոգի են . ըսել է՝ Փուանայիններէն երկու միլիոնի չափ աւելի . և բրուսիայիններուն ալ կը ոկնապատիկէն աւելի : 12,096, 860 հոգին գերմանական գաշնակցութենէս գուրս են որ են Ունագուհատանի և Խռառեալի կամ Դրանսիլվանիայի գերմանացինները :

Ուաճառիստանի թնակիչներն են 11
միլիոն . Պուբլիցիստների և կառլիցիստի 5,
105.568 . պօճէմիացիները 4.347.962 .
լոմպարտիստները 2.660.833 . Վէնէտիք
կինը 2.257.200 . Արտիլիարինն ու Ար-
էլզվիստինը 2.250.594 , Դրանուլիվանիա-
յինը 2.182.700 : Եւսդրիստի Եմո գե-
տէն վար կողմանը , 1.494.399 : Օլին-
ուորտիսն սահմանագլուխները 1.226,
408 : Շքիրիստինը 1.003.074 : Եւրադ-
րիստի Եմո գետէն վեր , և Սալցպուրի
826.694 : Դիրու և Վորտլիցի , 784,
786 : Քառինթիա և Քառնիոլա , 829,
250 : Օսմէշվերը 500.101 , Տալմացիա
կոմիսոր վոթիներուն երկիրը , 410.988 :
Օգորը , 492.486 :

Ուրդտմթիւը կրօնքի վրաց շատմնեւ
լով ասանկ գտնուած է : Հասմէագաւ-
ւանները 26.357.172 : Հուսմէագաւանն
յայները 3.694.896 : Հասմէականն չե-
ղող յայները 3.161.805 : Եւկղզուրկի
գաւաննութեան հետեւող բրոժէու-
գանները . այսինքն՝ լուտերականները ,
1.286.799 : Երաւհաւատատ բրոժէուգան-
ները . այսինքն՝ անոնք որ լուտերի
վարդապետութեան վրաց չի մնացին ,
ետքէն բրոժէուգաննութեան մէջ նորու-
գութիւններ ըրբն , 2.161.765 : Եխո-
դաւանները , այսինքն անոնք որ Երա-
ւածային երեք անձինքը կամ սուրբ
Կըրրորդութիւնը կ'ուրանան , 50.541 :
Եւ այս միագաւառաններէն 44.600 հոգի
կան Դրաննախիլլոնիա . 4.341 հոգի՝ զին-
ուորական սահմանագլուխները . և 700
հոգի ալ զօրաց մէջ : Աւրիշ աղանդնե-
րու հետեւողներ ամենը մէկէն 2.350
հոգի . որոցմէ միայն Կալվացիայի մէջ
կան 2.203 հոգի : Հրեաց 729.005 հո-
գի . որոցմէ կան Կոլցիցիայի մէջ 328.
806 . Վաճառիստանի մէջ 265.620 ,
Պոչէմիայի մէջ 70.037 . Երավիսյի և
Սիլէզիայի մէջ 40.064 : Վիլով մէջ
միայն 150 լուտերական կայ : Դերմա-
նական գաւառներուն մէջ 11 միլիո-
նէն աւելի հոսմէական , և 118.905
հրեայ կան : Միննէն շատ բրոժէուգան
կը գանուին Երաւհաւատ և Սիլէզիա , 1

միլէօն 110 հազար հոգիէն աւելիք։
Աւսդրիայի կայսերութեան մէջ 143
քաղաք կայ, որոց բնակիչները 10,000
հոգիէն աւելի են։ Վիլինսոնյի բլնա-
կիչներն են 407,980 հոգի . և Վիլսոնի-
նը, 156,326 հոգի . Քաղաքներուն առ
մենուն մէկէն բնակիչներն են 11 միլ-
եօնն : Ասդրիական կայսերութեան մը-
շակելի գետներն են 36,651,164 լըծ-
վար : Վեկ Ծվարը սցնական տեղ է որ-
մէկ զցգ եզնով մէկ օրը կը հերկըվի։
Այս տեղեկութիւններ՝ ինչպէս
բովնք, Աւկապուրեկի օրագրէն է : Պի-

տեմք որ Առագրիսայի կայսերութեան
երկիրները Ուաճառիստան, Կալցիա.
և Պուբլիանա գաւառները հայադի-
ներ ալ կան. ուստի զարմանք և ցաւ-

կուտայ մեղի՝ որ այս մարդաթուն մէջ ըստ անոնք նշանակուած չեն։ Հայերը բոլորավին համրանքէ դուքս ձգուած չեմք կարծեր. ուստի կը կասկածիմք, դուցէ այն երկիրները գտնուող հայերը զիրենք իրաւուած ըլլալովին՝ համրանքնին ուրիշ ազգի հետ խառնուած է։ Վաճառիսաանի հայերուն մեծ մասը արդէն մաճառ ազգին հետ խառնուած և ազգութիւննին կորանցուցած ըլլալնին գիտեմք. բայց Պաշապահօֆի և Սուզավայի և լէմուկրի հայերը Բնէ եղան որ համրանքնին այս աշխարհամար մարդաթիւն մէջ չկայ, ասիկայ չեմք կրնար դուշակել։

Կառավարութիւնը հրամանագիր
մը հանեց, որով ազգային պահապան
դոքը Աստրիխայի տէրութեան որ եր-
կիբները կան նէ պիտի լուծուին :

Դէ եւ այս պահապանը Ենիկը Առաջ

տէնիսան ձեռքէ հանել, որ իրենց խոր-
հուրդը առանց կասկածանաց առաջ
տանին : Հասարակապետութիւնը թէ
որ Տիէմնթէի մէջ առաջ երթալու
ժամանակ կամ առաջ առաջ կամ

Ֆիլմենկ լսմայափոխները շըլստ-
րիայի կառավարութեան առաջարկե-
ցին որ 60 միլիոն ֆլորին (գրեթէ
1200 հազար քեսէ ստոկ) վայս տառե-
լիքնցմէ . և պայմաններուն վրայօք
պէտք եղած խօսքերը այս մօտերս կը
լլմընենան :

Ունկնդիմութեան իշխանը Աստրիպոյի երկիրը գալքած է : Շատերը կարծիք ըստին թէ կայորը կանչել տուած է ասիկայ . և ասոր թերաքրաւթեամբ ըստ կառավարութեան հիմակաւան վիճակին երեւելի փոփոխութիւն պիտի ըլլաց : Ասիկայ քանի մը օրակիրեր ալ հասարաւեր էին : Վիենայի վիմասիպ օրակիրը կը հրասարակէ որ այս կարծիքը բոլորովին անհիմն է . և Ունկնդիմութիւնին Եշխանին Աստրիս գալը կառավարութեան գործոց հետ բնուայրաց բերութիւն մը չունի : Ասկայն այս ուռար ըստած կարծիքը բռնելու ալասիթ մը եղաւ անցածները : Ունկնդիմութիւն իշխանը պետութեան երեւելի անձանց մէկուն նամակ մը գրեր էր . որուն մէջ Ունկնդիմութիւնի և բոլոր Աւրսգրիպոյի գէպքերուն վիսց իրեն հաստուն խորհրդածութիւնները ընելով կը սէր . խորհրդականաց ատեանին մէծագոյն մասը կայսեր կազմը ըլլալու են . և մէկ օրեւնք մը գնել պէտք ըլլայնէ այն օրէնքը չէ թէ խորհրդական .

բարեյաջող սկզբնաւորութիւն մը ըստած ըլլար :

Ա. Գ. Վ. Ե. Բ. Ի. Ն.

Ներք կայսեր, այլ կայսրը խորհրդականներուն առաջարկելու է . և խորհրդականները ասոր վրայ խորհրդելով վերջին որոշումնին կայսեր իմացունելու են, որ այն ալիր վճռալվ հաստատէ : Վասնկ ըլլայ նէ՝ բան առաջ չերթարկամ ծանր առաջ կերթայ կըսէր : Թըլլթակիցը ասոր մեծապէս հաւանութիտուած էր . և այս նամակներուս երկուքն ալ հրատարակուած է : Եւ որովհետեւ այս բանս հիմնական փոփոխութիւնն մըն է, Վէդէռնիխ ասանկ փոփոխութիւններ ըներւ համար կան-

Հայք և Թողարկությունը մէկանց մի
և նոյն գմբազդութեան մէջ կը տան-
ջուեին ; ուստի և չէին կարող հոգալ
մէկպմէկ . ոչ ժողովուրդը իւր ասդուս-

ՍԱՌԻՏԵԿՆԻԱՅ: “Դուքինէն էքօ պը հօն պղական անուն Այսօյայի օրադրոյն գրուած նամակի մը մէջ հետեւեալ հաստուածը կը կարդացուի: “Չայն մը ելած է, որ հաստատութիւն առնել կ'սկըսի. և որքան որ արտառոց բան մը կ'երեւի ալնէ՝ պէտք է որ քեզի իմացնեմ: Կ'ըսուի որ պաշտօնէից խորհոուառնց եռ եռուհե Աստվեհան կը

ՍԱՌԻՏԵՎԻԱ : Դուրինէն էքս պը ծօն
պլան անուն Ավազյախ օրստդըն գրուած
նամակի մը մէջ հետեւեալ հաստուա-
ծը կը կարդացուի : « Զայն մը ելած
է , որ հաստատութիւն առնել կ'սկը-
սի . և որքան որ արտառոց բան մը
կ'երեւի ալ նէ՝ պէտք է որ քեզի իմա-
ցնեմ : Կ'ըսուի որ պաշտօնէից խոր-
հըդաբաննը կը խորհի Առատէնիա կը դ-
ղին ինկիլզներուն ծախսել . և այս խոր-

ար առանց նեղաւթեան կրնար սուա-
նալ , և ոչ հսկեւորականք կրնային ժոռ-
զովութեան հոգեւոր և մարմնաւոր օգ-
տիցը համար աշխատիլ , ու անմեղ ար-
դայոց բարեկրթութեան և ուսման
պիտոյքը հոգալ :

Երկու տարի կայ որ այս վիճակը
փոխուեցաւ , մեծազօր արքային հայ-
րական ինամօքը , և բարձրապատահւ
նախարարաց արթուն հակողութեամ-
բը , անօրէն մարք պակսեցան , դադա-

բեցան իրենց վեասակար չարագործութենէն, երկիրը հանդարտեցաւ և ժողովուրդը ստացաւ իւր կենաց ընչից՝ և պատառոյն ապահովութիւն ուստի և Հայաստանի ժողովրդոց համար ասկէ մեծ փափաքելի շնորհը չէր կրնար ըլլար, որ այնտէս անմահ և աներկիւղ կրնան ապրիլ և աշխատիլ Վզգային յառաջադիմութեան համար այս մասին այն կողմերը դանուող առաջնորդաց, վանահարց և հոգեւորականաց պարտաւորութիւններն ալ շատցան, որպէս զի ամենայն փութով և սիրով ժողովրդոց խաղաղութեանը և դպրոցաց յառաջանալաւ աշխատ

Քայլ զիւայս կերպ աշխատութիւն

ները պէտք է աւելի նուրբ դիսովզութեամբ ՚ի գործ դրուին. և այն գաւառին ժողովրդոց օգտամին համար հարկաւոր տնօրինութիւններ ըլլան, և օգտակար կանոններ ստհմանուին, որ ազգին յայսը պարապը չեղի. որբազան Պատրիարքը հոգեւոր և ազգային ժողովականօքյանշահափնդիրազգասիրութենէ շարժեալ, կամեցան կարեկից և օգնական ըլլալ գործակցութեամբ թէ սրբոյ Կորապետի վանական միաբանութեան բարեկարգութեամբ պայծառանալուն, թէ ուսման և կրթութեան այն գաւառին մէջ տարածելուն։

Եւ ահա այս պատճառաւ նախնի գերապատիւ ժողովականաց ատենրանդամ մը Փիզիկայ Պօղոս պատուելին իւր ծերութեամբն ու տկար մարմնովն փութաց գնաց Առւշ ազգային ժողովոց կողմանէ, որպէս զի վանքին վիճակը, ժողովրդոց կացութիւնը և դպրոցաց պիտոքը լաւ և ՚ի մօսոյ քննէ և իմացընէ ազգին։

Պօղոս պատուելին , որ աղդիս բարելաւութեանը ցանկացող ճշմարիտ աղդամէր և հաւատարիմ անձ մըն է ,

Էնայելով իր անձնական տկարութեանը, կատարեց ամենայն սիրով ազգին հրամանը միանգամայն վանքին բարեկարգութեան՝ և հասարակաց օդախն համար ծառայելով. ան իւր նուրբ գիշտողութեամբ և ազգարարութեամբ՝ ինչ օրինագրութիւնն որ պէտք էր՝ ի գիր արձանացցց. ու վերտափն մայրաբազաքս գառնալով՝ անձամբ ներկայացաւ գերագոյն ժողովոյն և առաջարկեց, ուստի ազգային ժողովն ալ լսու քննութիւնն ընկելով այն նիւթոց վրայ խորհրդակցութեամբ ֆիզիկայ պատուելիին, սուրբ Կարապետի վանաց և անոր վիճակին վերաբերեալ բարեկարգութեանց կանոնները յօրինեց քսան և երկու յօդուած, և ազգային կուբով և ստորագրութեամբ վաւերացց :

Վերադաշնութեան ժողովը իւր հաճութեան
այս կանոնագրութեան գործադրութեան
համապատասխան ընելու համար տաճկերէ.
Նի թարգմանելով ներկայացց բարձ-
րագոյն գրան, խնդրելով նորին հաս-
տառութեանը համար տէրուե բարձ-
րաշունչ հրամանը, ուստի բարձրա-
գոյն գուռնալ ալ արժան դատելով օ-
դաստափառ ինքնակալին ներկայացց ։
որ և ամբողջ կարգաւում՝ և մշտնիւնա

որ հաստատութեանը հաճելով բարձրապատիւ փոխարքային հրաման Խըրկեց, որուն յատուկ հրամանագրով և այլ յանձնաբարական նամակներով նոյն կանոնագրութիւնը ֆիզիդայ պատուելին առաւ գնաց ՚ի Առշե հաւանութեամբ գատաւորաց գաւառին հաստատեց այն մեծահռչակ վանքին մէջ ժողովով, ու բոլոր վիճակին մէջ տեղ տեղ ալ մասնաւոր կարգագրութիւնները ընելով, տարւոյ մը չափ ևս կեցաւ. որով ընդ ամենը ֆիզիդային կրկին երթալ գալը ու այն գաւառին և վանքին համար ըրած ազգասիրական աշխատութիւնները երեսուն և

Երկու ամիս տեւեցին . սակայն իւր
անձնական տկարութիւնը ծանրանաւ
լով՝ զնիքը բժշկական գարմանոց յայժ
կարօս ըրտաւ . վասնորոյ հարկադրեցաւ
Պոլիս մեալու Երկրորդ անգամ՝ գալուն
1850 մայիս 10 :

Վանական միտքանութիւնը զայս
կանոնական օրինաց գործադրութիւնը
սիրով և շնորհակալութեամբ ընդու-
նեց, ուստի և՝ ՚ի միամտութիւն գե-
րատցին ժողովոյն ստորագրութեամբ
հաստատեց, որ առանց պատճառա-
նաց ՚ի գործ դրուեն ամեն կանոնները
որ պատիկ ու անհիմն բան չէր, այլ
մեծ և ազգային գործ, որ սկիզբէն
քիչ մը ժամանակ ՚ի գործ դրուեցաւ,
և բարեկարգութեան համբաւը այս
և այն կազմերը տարածեցաւ :

Այսու ամենայինիւ աղքային գերագույն ժողովը մտադիր էր՝ այս կանանց բութեանց միջացով՝ անոնց աղքուու տշխատութիւնները տեսնել, գաւառին ժողովրդոց բարեացը ձեռնատու ըլլալով՝ և իւրաքանչիւր թեմերը դպրոցներ հաստատելով, բայց զի այն վասերացեալ օրինադրութիւնը արժանաւոր արդիւնք չունեցաւ, յացանի եղաւ որ կանոնները ապարդիւն թղթի վրայ գրուած մնացին:

Աւասի այս մասին եղած անհոգութիւնները երբ կը լսէր գերադայն ժողովը, թէ պէտ անհաւատալի կը թուեր, բայց և ստուգելու չը դանդաղեր. վասնարոյ արքանահաւատ անձանց վիսցութեամբ լսուած գանդատները ստուգուեցան, թէ կանոնագրութեան անդործ մնալը, թէ գաւառին գործոցները անխնամ ըլլալը և թէ ժողովրդոց հանդստութիւնը խանդարութիւնը, թէ վանքին բարւոք կառավարութիւնը օրինապէս առաջ չերթալլ :

Այս պատճառաւ սովիպուեցան
հոգեւոր և գերագոյն ժողովներն ըե-
րել ի կոստանդնուպօլիս Աշոյ վանից
առաջնորդ Զաքարիա վարդապետն՝
և հրամարեցուցանել ի պաշտօնէն՝
որ անկարող եզաւ Ճշդիւ ի գործ դը-
նելու կանոնաց պահպանութիւնը, վաս-
նորոյ այժմէն ընտրեցին ուստումնասէր
և ազդակասէր Կարապետ վարդապետն՝
որ Պարսի առաջնորդ էր, և սրբա-
զան Պատրիարքին կողմանէ գնաց Ար-
շոյ վանքը ի փոխանորդութիւնն, և
կրկին անդամ սրբազն Պատրիարքին
և գերագոյն ժողովոյն յատուկ յատուկ
նամակագրութեամբ ծանուցաւեցա-
նոյն վանքին միաբանութեան ազդին
անփոփոխ կամքը. որ է անփակաս և
անխարդախ գործածութիւնն որպատհու-
ման կանոնացն, որն որ գարձեալպատ-
րիսբական կերպիք վաւերացընէլուլ,
և մասնաւոր յաւելուած կանոնովք
բացատրելով՝ Խրիուեցաւ յատկապէս
նոյն միաբանութեանը ի ձեռն հա-
ւատարիմ տիրացու Վարդանին՝ որ է
աշոտիերս սրբազն Պատրիարքուն:

Արդ՝ այս օրինաւոր կարգադրութեան Առաջնագործութեան առ Աշուածանքին սուրբ Կարապետի վանեց բարեկարգութեան համար ՚ի գործ դրին հոգեւոր և քաղաքական գերատեցոյն ժողովներն, գովելի և փափաքելի օրինակ մըն է Հայաստանի մէջ ուրիշ գտնուած վանքերուն բարեկարգութեանն ալ, որուն համար ջանադիր պիտի ըլլան ժողովներն հետզհետէ այս օրինակ կանոնադրել զիւրաքանչչւր վանկը ազգային օգուտը միայն նպաստակ բռնելով, վասն զի ազգը կը ցանկայ բարեկարգեալ տեսանել բոլոր վանորայքը, վանականաց միաբանութիւնը՝ և Հայաստանի գաւառին գպրոցները. կը յուսանիք որ ամեն առաջնորդ և վանահարք օրինակ առնելով իրենց այս կանոնադրութիւնը, կը ջանան նաեւ բարեկարգութեամբ զարդարելիրենց վանքերը ու միաբանութիւնը, բայ հաճութեան կամառ

ազգին, և դպրոցները ուսմամբ յառաջացընելու աշխատիլ, և ժողովրդոց բարելուութեանը յոդնիլ՝ի փառլու ազգին, և չնորհաւարտ գոհութիւնը լսել համօրէն ազգէս, և այս ազգային բարեացը պատճառ կ'ըլլան ստուգապէս իւրաքանչիւր ազգասէր հոգե որականիք՝ որ իրարու հետ սուրբ սրտիւ և անկերծ սիրով կը վարուին, բարի օրինասկ տաղավ իրենց յանձնուած ժողովնոց, և անձամբ հայելի առաքինութեան ըլլալով. վասն զի քըրիս առնեական աերիծ կրօնը՝ և իրենց նր կարգը բուն աս պարտաւորութիւները կը պահանջեն իրենցմէ :

— | բագրոյս 69 և 71 թուով հըրաւ
տարակուած թերթերուն մէջ պատ-
մած եմք թէ՝ Քլէանորս անուեն մէ-
կի մը շնամած և այս պատճենիւան ձեռաւ-
գիր յունարքէն օրինակը գտեր է Ախմա-
նիտիս անուն մէկ յոյն մը Այնուոզի
վանքերուն մէկուն մէջ . և մօտերըս
հրատարակելու միտք ունի եղեր : Այն
Ախմանիդիսը ուրիշ հին ձեռագիրներ
ալ գտեր է . որոց վրայ Վիեննայի
Երազական պատուական լաբարոյն մէջ , (յու-
լիս 22=10 , թիւ , 29) այս հատուա-
ծը կը կարդամք :

„ | Սպիրակիբըյուլիսի 12 ին երեւանի թերթին մէջ հետեւեալ զգուշաբար լուրը կը դնէ - : Ըստ լրագիրներով համբաւ մը տարածուեցաւ որ Ամսնիթիքէս անունով մէկը շատ յունաբէն հին ձեռագիրներ գտած ըլլայ, բայց վերջէն տափկայ պատրամնք մը եւրեցաւ : Այս Ամսնիթիքէն արդէն շատ տարիներ յառաջ Վիճէնքի մէջ կը պարծէր թէ բաղմաթիւ նոյնպիսի ձեռագիրներ գտած է և զանոնք ծախու կը հանէր : Հունատառանի կառավարութիւնոյն առեն առ բանին համար մասնաւոր քննիչ ժողովք մը դրաւ, որուն մէջըն էր Ասանկազէ հմուտ յունագիտնալ : Այս ժողովքը քննութիւն ընելով բոլոր նոյն ձեռագիրներուն անհարազատութիւնը յունարէն լրագիրներու մէջն ալ ասոր ասպացոցները հրատարակեց : Խաբուած խարեւանի հիմայ Կրտսանդնուալովի մէջ է, և գտրձեալ նոյնպիսի համբաւներ կը տարածէ - : Չենք գիտեր թէ աս աղդաբարութեան որըսափ մասը սասցգէ, թէպէտ ըստ ինքեան մեզի շատ բարձր էր որ Ամսնիթիքէսին ձեռագիրները ստոցգ ըլլային : Եւրոպայի մէջ շատ անգամ վարպետութեամբ հին ձեռագիր ու հին գրամ ձեւացցենողներ եւած ըլլալով՝ ասանկ բաներու մէջ խիստ զգուշութեամբ կը վարուին :

РЕДУКЦИЯ

ԱՐԵՐԻԿԱՅԻ ՄՈՒՐՈՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ
ՏԵՂՎԱՑՈՒՑԻՉ ՆԱՐԱԿԱՆԵՐ
(*Հայութիւնի լիւակ*)

” Ոլովախթի գետայն քովեցն դար
” վեր ելան մինչեւ ֆռանսարզներուն
” Ոնևող անունն հին գեղին դիմացը .
” գետայն առաջին յորձանուտքէն քա-
” նի մը մղսն վեր : Օմայթ հոն հիմ
” նեց Կառուվաւ քաղաքը , (որ կարծե-
” ցեալ եգիպտական լեզուովը ընտ-
” ըեւներու բառն ըսել պիտի ըլլոց) :
” Արկեց գեղեցիկ տեղ ընտրել անհը-
” նար էր քաղաքը մը շնուրու համար :
” Գետը հոս կը լայննայ , և գալորա-
” գեղ կղղիներուն կը ծածկուի : Գե-
” տեղեցքը քընկ քընկ բարձրանալով
” վերը մէ կ գարատափ (բարձր ախող
” տեղ) մը կը ծեւացընե , որկէց գետը
” կ'երեւի , որ բոլորտիքը երկար առ-
” ջան մը ընելով կը վաղէ : Օմայթ այս
” գետինը ծախու առաւ . և բաժին
” բաժին ըրտւ իրեն ապագայ աշա-
” կերտներուն բաժնելու համար , ծանր

“ պայմաններով. Իրեն գիրքը և տետ-
“ րակները միայն Ամերիկացի մէջ տա-
“ բածելը հերթ չեղիք չսեպեց. Խնկիլթէռ-
“ ռա ալ բազմաթիւ օրինակներ խըր-
“ կեց. և Կառու վուի ստորագրութիւ-
“ նը և բարեխաջող վիճակը քիչ ժամա-
“ նակի մէջ Խնկիլթէռ այցեն հոն շատ
“ գաղթականներ տարաւ : Այս քա-
“ զաքս հիմա 15,000 բնակիչ ունի. և
“ գրեթէ ամենն ալ մօռմօն են : Պըզ-
“ տիկ մէկ հասարակակետութիւն մը
“ կը կազմեն, առանձին օրէնքներ ու-
“ նին . գատաւորնին իրենք կ'ընտրեն,
“ և իւելքերնուն ինչպէս պատշաճ կը
“ թուի նէ անանկ կը կառավարուին :

“ Ո՞էկ չենք մը ամենուն աչքը ե-
” րեն կը քաշէ . և այս ալ հիմա շին-
” վելու վրայ է . իրենց կրօնքին յա-
” տուկ մէկ տաճար մըն է այս , սրբ-
” բատաշքարերով շինուած : 120 տու-
” նաշափ երկայնութիւն և 80 ոտնաշ-
” չափ լայնութիւն պիտի ունենայ :
” Դուրսէն մէկ վեմ և պատկառելի
” տեսք մը ունի . բայց կ'երեւի որ մեր
” ելի՛լցի անունով ձանցած շէնքերնուս
” հետ նմանութիւն մը չունի : Ախտքդ
” բեր մէկ գեղեցիկ ուղղանկիւն (քա-
” ռանկիւն) մը . ամեն մէկ կովմը ու-

” թը հատ լեցուն կամարաձեւ պա-
” տուհան . որ բաւականին չափ ճար-
” տարապետական հարստութիւն ու-
” նի . ճակատը երեք հատ մեծ դուռ ,
” զարդի կովմանէ աւելի հարուստ .
” և կը հասկրնաս այն շենքը , որուն
” համար մօռմօնները աշխարհքին ու-
” թերորդ հրաշալին է կ'ըսեն : Այս
” տաճարը լըմինալու տակաւին շատ
” բան կ'ուղէ : Քարե շինուած գեղե-
” ցիկ սանդուղքով մը հսն կ'ելլուի :
” Վարի կողմը աղանդոյն զանազան մը-
” կրտսութիւններուն համար պիտի
” յատկանայ . որովհետեւ ասոնք շատ
” տեսակ մկրտութիւն կը ճանչան :
” Ոչկ մօռմօն մը որքան ուղէ նէ յա-
” ճախ կրնայ . մկրտուիլ մեռելներուն
” օգուտ ընելու համար : Կ'երեւի որ
” անոնց հաւատքին մէջ ընդունուած
” է որ մեռնողները կրնայ մէկ մարդ
” մը դատապարտեալ ըլլան ալ նէ ա-
” զատելու , անոնց դիտաւորութեամ-
” բը ջարը ընկդմելուկ և մկրտելով :
” Հիւանդներն ալ . կը մկրտեն քմըշ
” կութեան յուսով . և մեղաւորներն
” ալ մեղքելնուն թողութիւն դըտ-
” նելու համար Այս մկրտութիւն-
” ներուն շատերը արնէն դուրս պիտի
” ըլլան գեացն մէջ , ուրիշները տա-
” ճարին տակը յատուկ շինուած ստո-
” բերկրեայ տեղ մը պիտի ըլլաց , և

Հիմա ալ կ'ըլլան , որ մէնք ալ տես-
” նելու հետաքրքրութիւն ունեցանք :
” Ոկրտարան մը շինուած է հօն , սո-
” զոմնեւան տաճարին պղնձէ աւա-
” զանին նմանութեամբք . փայտէ քան-
” դակած տասն և երկու եղն նըկար-
” ված ըլլալով՝ նոյն նիւթէ մէկ աւա-
” զանի մը ներքին դրուած են . կըրե-
” նակ սանեդուղք մը , և վրան պղտիկ
” սրահակ (սահանըթ) մը , աւազանին
” կամ տաշախն վրան կը տանին , որկեց
” կ'ընեն մերտութիւնը , մկրտելի ան-
” ձա նուոին մէջ ընկդմելով ” :

" Քանի որ մռամեններուն համը բանիքը շատցաւ, սուտ մարդարէն ալ

այնքան իրեն դիսմունքները և յօցը
ընդարձակեց : Հետեւողները ասոր վե-
րաց կուրօրէն վստահութիւն մը ու-
նենալով, ինքն աշ անսնկ կը ցուցըներ
որ ամեն շաբթու Վասուծոյ կողմանէ
մէկ մէկ յայնառաթիւն կ'առնէ ուղղա-
կե . և ասաւ իրեն նոր առաջարկու-

զի . և առաջ լրաց ապ առաջարկու-
թիւնները կամ խենթութիւնները յա-
շտենականին Վատուցոյ հրամանաւը
օրինաւոր եղած կը սեպուէին : Ո եր-
ջապէս Օ մայթ այն աստիճան խելացը-
նարութեան հասաւ , որ ինքզինքը թա-
գաւոր պատկել տուաւ : Իրեն հետե-

իր կինը՝ որ Ղամմա կ'ըստուէր, բուն
հնդկաստանցի է, և ուղիղ գծիւ իսու-
րայէլացւոց ցեղերէն եկած է : Եւ-
ինքը Շօէ կամ Յովլսէփ՝ Յակոբ նա-
հապետին Յովլսէփ տղուն ցեղէն է .
և Արտուած ասմէք և ասոնց զարմը
ընտրեր է Ձերին օրերուն սուրբերը կա-
ռավարելու համար : Եւ հնդիկները
և սուրբերը, Շօէն իրենց գլուխ ունե-
նալով՝ պիտի տիրեն աշխարհքիս, և
իրենց սրովը բոլոր աշխարհք իրենց
վարդապետութեր պիտի հնազանդե-
ցընեն : Հետեւաբար Շօէ Օմայթ
մէկ գաղտնի կերպով մը թագաւոր սրբ-
սակվեցաւ 1842 ին . յիսուններուն խոր-
հրդովը և անոնց ձեռօքը . որոց ա-
նունը ինքը կիսառուց դրեր էր . և ի-
րենց գլխուն վրայ երդում ըրին խա-
բեբային թագաւոր ըլլալը չի հրատա-
րակել . մինչեւ որ ուժերինին չաւել-
նայ . և Օմայթ միանդամայն գերա-
գոյն իշխան և կրօնական պետ և մեծ
դատաստոր և Ղատվույի լեգէննին ըս-
տարապետ և նոյն քաղաքին քաղաքա-
պետ և տաճարին գանձապետ եղաւ .
ամեն իշխանութիւնները իր վրայ ժողո-
վելով . և ժողովուրդը իր ուղածին պէս
կտուալարելով :

„Ալ հասկըցուի որ մօռմօնները
բոլոր տիեզերաց տիրելու յուսայն զի-
րենք առնել տալավ անսանձ իրենց կիր-
քերուն անձնատուր եղան : Բոլոր երկ-
րին բնակիչները վախցացին . և ամե-
նուն ալ ատելի եղան : Ո՞էկ չարագործ
մը որ շատ գէշութիւններ ըրեր էր ,
Օմայթին ինկաւ . Խլինոսցինները ու-
ղեցին նէ՝ Օմայթ ասիփայ պաշապա-
նեց և անոնց յանձնել չուզէց . ուսոփ
ասոնց կաւալսրիչը թուվմաս Ֆուու՝
բոլոր զօրքը ոտք հանեց և սուտ մար-
դարէն և անոր եղայրը անձնատուր
ըլլալու ստիպէց . օրինաց գէմ ապրո-
տամիք բռնելուլ . Երկու եղայրները
կրնային քաղաքական պատերազմ մը
յարուցաննել . սակայն կ'ուղես վեհե-
րուսութիւն սեպէ . կ'ուղես չափա-
զանց վատահութիւն , մօռմօններուն
ապսպըցին որ խաղաղ կենան , և ի-
րենք գացին Քարթաճ քաղաքը իրենց
թշնամիններուն ձեռքը , անձնատուր ե-
ղան : Խոնք մէկ վայակերտ բանտ
մը դրին , որ աղէկ պահպանուած և
ամուր բան մըն ալ չէր . քանի մըն ալ
պահպան դրին : Դիշերուլ խել մը
մարտիկ անձանօթ կերպարանկը մօռած
և երեսնին գոյցած՝ պահպաններուն
վրայ գիմեցին . բանտին դուռար կոտ-
րեցին . Ճ'ոէ Օմայթը զարկին . որ վեց
տեղաց կապարեայ գնատակներուլ զար-
նա եամ մեռաւ :

” Այսնկ կորսուեցաւ 1844 ին յունիսի 27 ին՝ մէկ ատելի դաւաձանութիւնով մը. անանկ մարդ մը, որ արձանի էր իր կեանքը ապաշխարութեալ մը վճարելու, և այս կերպով մէռնելով՝ այս աղանդը նահատակ մը

ունեցած եղաւ : Այսկայն վերսիշեալ
հինաւուրցներուն փառասիրութիւնը մօռ-
մօնի աղանդոյն ծաւալումը ու շացուց :
Վեհքսանդրք մակեդոնացիին զօրապետ-
ներուն պէս Ճ'օէ Օմայթին յաջորդե-
լու վրայ մէջերնին կոիւ հանեցին :
Եւ ներքին երկպառակութիւնները
գաղթականութեան բաժանմանը պատ-
շաւ են :

“ Ամանք կօփա , և արեւմտեան Ե-
մերիկայի հեռաւաւոր կողմերը գոցին ի-
րենց նոր բնակութիւններ հաստատե-
լու . բայց Նառովուի մէջ ալ բաւա-
կան բազմութիւն մնացին : Կլինօացի-
ներուն օրէնսդոր իշխաննութիւն փոլժ

մը ունէր մօտմօններուն արտօնութիւնները վերցընելու, որոնց վնասը տեսած էր : Քիչ մը ետքը այս վտանգաւոր դրացիներուն իրեն մօտ մնալն ալ չուզեց . թէ և տկարացած էին . և 1848 թուականի տարբեոյն մէջ այն

ծախը եղեր էր, կրակ ձգեցին այրեցին. մօսմօնները՝ Կառւլուէն դուրս հանեցին վրանտեցին. որ ամեն մէկը մէկ մէկ ճամբայ բռնելով ցիր ու ցան եղան։ Ամենէն աւելի մոլեռանդն (ֆանագիր) գտնուողները Ոիջիկան ըժին մէջ եղած Քատօռ կզզին գացին. և իրենց գլուխ ճանցան Ճէմս Ոդրէնկ անուն մէկը. որ վկնքը կ'անուանէր բոլոր աշխարհի թագաւոր. և հանդէսի առիթ մը ըլլար նէ գլուխը թագով և ձեռքը թագաւորական գաւազանով հանդէս կ'ելլէր. իսաց առաջը նին կեանդի մէջ այս մարդոք անարժան չէր սեպեր մէկ հրազէն (թիւֆէնկ) մը առնել, և իր կուսակիցներուն հետմէ, կ տեղ ցամաք երկիրը երթալ և անասուններ և ինչ որ իրենց բանին յարմար գալու գանեին նէ գողնալ, յափրշտակէլ տանիլ։ Վյուլ ասսնց կըզ զին աւազակներու որչ (եռլավ) մը դարձաւ. սուտ դրամ կը կորէին հօն. մօսաւոր երկիրներէն աղջիկներ կըյափրշտակէին հօն կը տանեին կը պահէին. և սալսրամկան բնակութիւննին այբերու մէջ և գետնի տակ էր, և այս կողմերուն օրագիրներուն պատմածը կարգացողը՝ Ժիլ Պլասի պատմութիւնը կը կարգաց կը կարծէ. Վյուլ թըլը ուառ բազդախնդիրները վերջապէս իրենց պատմութեանը վերջին հասան. և այն հեռաւոր կրպին, որն որ իրենց չարագործութեանցը սովորինութեան տեղի ըրեր էին, չի կրցաւ պանքը արդարութիւն ու ձեռքէն ավատել։ Վյուածամատ մէջ (1851 մայիս), Ոիջիկան գաւառին պետական թիւները վերջին հասան. որ երկու շոգենաց մանելով Քատօռ կրպին գացին. և սուտ թագաւորն ու անոր սուտ նախարարները բռնեցին. Հիմա ասոնք Պէջրօս անուն տեղին չի կի բանան են. և մերձակայս գաւազական նիստաերուն՝ գաւառաւորներուն աւազը պիսի ներկայանան. որիէս զի հասարակաց մէջ պարզած համբաւոյն պատասխան տան. որով իրբիւ գող և աւասի անուննեն եւած է։

” Ուստի մասնաւոր սլաք է :
” Ուստի մասներուն մէկ ուրիշ խռո մը
բը , որ աւելի աշխատաւոր և աւելի
սղամիտ մասն է ժողովրդեան , ցամա-
քալ Քալիֆօւնիս երթալու ճամբար
ելաւ . բայց ճամբար ընելի իբէն ըրած
խորհրդածութիւննին՝ ճամբար ելլա-
լէն առաջ ըրած առաջարկութիւններ
նուն մէջ գափոխութիւն տուաւ : Այլ
շակութեան հաստատուն արդիւնքը
անսոնց մասցուց սոկիի խոսամաւնքը ,
որ շատ անդամ սոււա ելած է . և մօս-
մօնները մէծ ազի լըճին մօտերը գաղ-
թականութիւն մը հաստատեցին . և
իրենց աղանդոյն ցիր ու ցան ելած կը-
տորուանքը հոն ժողովեցին : Այս ալ-
քիչ մը ընդարձակ պատմելու կարու-
է . որ ուրիշ նամակալ մը կ'ընեմք ” :

ՕՐԵՈՒՅՑՈՒԹԻՒՆ

2022-2023

ԵՐԱԳՐԻՒՄ

ՊՐԵ-ԱՆԴԻ ՅՆՎԵՆՆԵ

Չախումնական

ԿԱՍԵՐԵՄՆՈՒԹՊՈՒ, Ի՛ւ Ի ՏՊԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՑԵՍԵՑ